**Արձանագրություն N 1-09/18**

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորատի 2018 թ.-ի
սեպտեմբերի 26-ի նիստի

Ներկա էին՝ Թոքմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Թոքմաջյան Վ.Հ., Գրիգորյան Թ.Գ., Առաքելյան Ա.Ա., Մուսայելյան Վ.Ս., Ավետիսյան Ա.Ա., Ծատրյան Ա.Ա., Շահբազյան Ա.Վ., Փարսիյան Ն.Վ., Հարությունյան Մ. Ա., Չաքարյան Գ.Է., Գևորգյան Մ.Կ.:

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ), Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Ռ.Մ.:

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1.Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի մասին:

**Լսեցին 1 -** Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի մասին ներկայացրեց ռեկտոր Հ.Վ.Թոքմաջյանը: Նշվեց, որ համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման նախապարաստական աշխատանքներին մասնակցելու և համապատասխան խորհրդատվություն տալու նպատակով բուհ է այցելել ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի» ներկայացուցիչ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Անուշավան Մակարյանը:

**Որոշեցին 1.1 –** Ընդունել ի գիտություն Շուշիի տեխնոլոգիական համալսարանում պետական հավատարմագրման գործընթացը սկսելու մասին ռեկտոր՝ Հ.Վ.Թոքմաջյանի տեղեկատվությունը:

**1.2 –** Հանձնարարել ռեկտորի տեղակալ՝ Ռ.Հարությունյանին, ուսումնամեթոդական բաժնի պետ՝ Թ.Գրիգորյանին ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի» ներկայացուցիչ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Անուշավան Մակարյանի և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների, դասախոսների, ինչպես նաև ուսանողների հետ կազմակերպել հանդիպումներ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի կազմակերպման առանձնահատկություններին ծանոթացնելու նպատակով:

Նախագահ՝ ստորագրություն Հ.Վ.Թոքմաջյան
Քարտուղար՝ ստորագրություն Ա.Ա.Առաքելյան